առաքեալ էին, զալ այսր առ մեզ, զրպս եւ ընկալաք սիրով. եւ էին յայց եւ մենաստանաց մերոց. եւ բարձեալ ընդ իւրեանս նչխարս ինչ սրբոց յուղարկեցան: Այն ինչ եղեալ էր նոցա զոտան անդր քան զսահմանս Պարսից եւ ահա երթեալ թշնամիք մեր պատմեցին զամենայն անցս առաջի թագաւորին Պարսից. որում ա– ծայ ես յանդիման. սակաւիկ մի եւ վճարեալ էր վասն իմ. հազիւ ուրեմն զերծայ ի գլխա– պարան լինելոյ: Ո՛հ, յորպիսի աղէտս վասն– պից զտանիմք» (տե՛ս վարը § 33): Զաքա– րիա մեկնած էր Էջմիածնէն 1610, Մայիս 15ին. ուստի Մելքիսեդեկի կալանաւորումը տեղի ունեցած է այս տարւոյ Մայիս 15էն ետքը:

Մելքիսեդեկի թղթին մէջ յիշուած «հա– կառակորդք» Նոր–Ջուղայեցիք էին. անոնք կը վախցնէին, որ Դաւիթ վերադառնար Էջ– միածին եւ ուրանար Աթոռին: Պատրուակ առնելով Հռիփսիմեանց նչխարներու «գողու– թիւնը», ամբաստանեցին անոնք զՄելքիսե– դեկ Շահին քով, որ այս միջոցին Դորի կը գտնուէր: Շահ Աբաս ունէր ոխ Մելքիսեդեկի դէմ այն պատճառաւ, որ անիկա անհրաման «ի կէս ճանապարհէն (տարագրութեան) դար– ձաւ եւ եկն յէջմիածին եւ առնէր զկաթողի– կոսութիւնն» (Դաւր. 202), այժմ աւելի զրգռուեցաւ. հրաման ուղարկեց Երեւան առ Թահմազզուլի բէկ, Ամիրգունա Խանի որդին եւ տեղապահն, որ անմիջապէս կալանաւորէ զՄելքիսեդեկ եւ իրեն ուղարկէ. հրամանն էր. «Զմելքիսէթ կաթուղիկոսն կալեալ տան–